

ԻՐԻՆԱ ԲՈՒՆԱԶՅԱՆ

ՇԵՐՎՈՒԴ ԱՆԴԵՐՍՈՆԸ ԵՎ ՆՐԱ «ՈՒԱՅՆՍԱԲՈՒՐԳ,
ՕՅԱՅՈՒՆ» ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ամերիկյան գրականության հեռացումը եվրոպականի ազդեցությունից՝ աստիճանական գործընթաց էր, որն իր ավարտին հասնավ XIX դարի վերջին տասնամյակներին և XX դարի սկզբներին, երբ գրական ասպարեզ իջան ամերիկյան նոր գրականության հիմնադիրներ Մարկ Տվենն ու Թեոդոր Դրայզերը, որոնց արվեստը մի յուրօրինակ ջրբաժան էր երկու մայրցամաքների գրականության միջև: 50-ականներին տված իր հարցազրույցներից մեկում՝ խոսելով այս ջրբաժանի մասին, Ու.Ֆոլքները նշում է, որ, ի տարբերություն Մարկ Տվենի, Թեոդոր Դրայզերի ու Շերվուդ Անդերսոնի, էդգար Պոն ամերիկացի գրող չէ: «Եթե խոսենք առաջինների մասին, - շարունակում է իր միտքը Ֆոլքները, Անդերսոնի, Դրայզերի, ապա այո, նրանք իրոք ամերիկացի գրողներ էին, և այդ իսկ պատճառով ես նրանցից ավել շատ բան եմ ժառանգել, քան Պոյից, քանի որ ինձ համար և՛ Պոն, և՛ Դոթթերը, և՛ Լոնգֆելլոն՝ Նոր Անգլիայի բնակիչներ են և, ըստ էության, եվրոպացի գրողներ» (Ա.6, 394):

Ֆոլքների կողմից նշված ամերիկացի գրողների արվեստը ազգային էր, քանզի այն ամբողջությամբ նվիրված էր ամերիկյան իրականության խնդիրներին, քանզի խոսելով իրենց ժամանակակից Ամերիկայի մասին Տվենը, Դրայզերն ու Անդերսոնը, ինչպես ավելի ուշ՝ հենց Ֆոլքները, ցույց էին տալիս ներկայի կապը ամերիկյան պատմության անցյալի հետ: Ըստ էության ամերիկացի արձակագիր Անդերսոնը դարձավ այն յուրօրինակ կամուրջը, որը ժառանգելով ու զարգացնելով Տվենի ու Դրայզերի գույտ ամերիկյան գրական ավանդույթները՝ փոխանցեց կրտսեր սերնդին, դարձավ Էրնստ Զեմինգուեյի, Էրսկին Քոլլոուելի, Թոմաս Վուլֆի, Դոս Պասոսի գրական «հայրը» (Ա.8, 149):

Շերվուդ Անդերսոնը (1876-1941թթ.) ծնվել է Միջին Արևմուտքի Օհայո նահանգի փոքրիկ Քամդեն գյուղաքաղաքում: Գրական գործունեությամբ Անդերսոնը սկսեց զբաղվել արդեն հասուն տարիքում և իր առաջին «Ուայնսթուրգ, Օհայո» (1919թ.) պատմվածքների ժողովածուն հրապարակեց, երբ 45 տարեկան էր:

Զնայած իր ստեղծագործական կյանքում Անդերսոնը գրեց մի շարք վեպեր՝ «Քայլարշավող մարդիկ» (1917թ.), «Ցանկությունից այն կողմ»

(1932թ.), «Ապիտակամորթ աղքատը» (1923թ.), «Շատ ամուսնություններ» (1923թ.) և «Մուք ծիծաղ» (1925թ.), սակայն նա ամերիկյան գրականության պատմության մեջ մտավ որպես առաջնակարգ նովելագիր, որն այս ժանրում ստեղծեց իր ուրույն ավանդույթները: Վերը նշված՝ «Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուից զատ Անդերսոնը հրապարակել է նաև իր «Ձվի հաղթարշավը», «Մարդիկ և ձիերը», «Մահը անտառում» պատմվածքների ժողովածուները և մի շարք այլ պատմվածքներ, որոնք տեղ չեն գտել նրա ժողովածուներում:

Թե՛ ամերիկյան քննադատների և թե՛ Անդերսոնի ավագ ու կրտսեր գործընկերների կարծիքով «Ուայնսբուրգ, Օհայոն» լավագույնն է այն ամենից, ինչ երևիցես ստեղծել է գրողը: Ժողովածուում իր արտացոլումն է գտել Անդերսոնի մանկության ու պատանեկության տարիները հայրենի Քամդենում: Ժողովածուի մեջ ընդգրկված պատմվածքներում գրողը ներկայացնում է այն իրական փոքրիկ աշխարհը և այն «փոքրիկ» ամերիկացիներին, որոնց հոգսերին ու վշտերին քաջատեղյակ էր անձամբ: Սկզբից ևեստ Անդերսոնը ստեղծագործում էր այն նույն սկզբունքով, որով ավելի ուշ խորհուրդ էր տալիս առաջնորդվել իր կրտսեր ընկերոջը՝ Ուիլյամ Ֆոլքենբերին. «Այն ամենը, ինչ Դուք գիտեք՝ դա մի փոքրիկ հողակտոր է, ինչ-որ տեղ Չեր մոտ, Դարավում: Սակայն դա բավարար է: Դա այն փոքրիկ աղյուսն է, առանց որի չի կարելի պատկերացնել աշխարհը: Դանիր այդ աղյուսը, և տիեզերքը կխորտակվի» (Ա.7, 109):

Մինչ այդ Անդերսոնը արդեն հասցրել էր գրել իր «Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուն, որում պատկերված երևակայական Ուայնսբուրգ զավառական փոքրիկ քաղաքը հենց այն «փոքրիկ հողակտորն էր», որը գրողը դարձրել էր «տիեզերքի» կենտրոնը:

Իր արվեստը օբյեկտիվորեն ընկալելով որպես ռեալիզմի և մոդեռնիզմի միաձուլում, Անդերսոնը ստեղծագործական կյանքում ձգտեց հնարավորին չափ մոտ լինել իրականությանը: Առաջնորդվելով այս սկզբունքով, որը թերևս առավել կարևոր տարրն է նրա գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգում, գրողը մերժեց այսպես կոչված «անակնկալներով» պատմվածքի ավանդույթը, որում բացակայում էր կապը հերոսի անցյալի ու ներկայի միջև:

Ի հակադրություն այդ ավանդույթի, որը մեծ տարածում էր գտել XIX դարի վերջի և XX դարի սկզբի ամերիկյան գրականության մեջ, Անդերսոնը ստեղծում է իր ուրույն հերոսը, որի կյանքում ամեն ինչ կանխատեսելի է, որը ներկա ժամանակով այնպիսին է, որպիսին եղել է անցյալում: Նա պարզորոշ ցույց է տալիս, որ անհատին ձևավորում է հասարակությունը և ժամանակը. «Ինչ վերաբերում է ինտրիգներով պատմվածքներին՝ Մոպասանի, Էդգար Պոյի ու Օ'Քենրիի այդ ապօրինի զավակներին՝ ապա բնական է, որ դրանցում ոչինչ

չէր հիշեցնում այն մարդկանց կյանքի մասին, որոնց ես երբևիցե ճանաչել եմ» (Ա.1, 380):

Աս է պատճառը, որ Անդերսոնի կերտած նոր տիպի հերոսը՝ «չնչին», «հասարակ» մարդուկը, որի կերպարը «Ուայնսբուրգ, Օհայոյում» հասցված է գրոտեսկի՝ անսովոր ու խորթ էր ոչ միայն ընթերցողի, այլև խմբագիրների ու քննադատների համար: Վերջիններս նշելով Անդերսոնի պատմվածքի՝ դրա կառուցվածքի ու լեզվի բարձր արժանիքները, դրա արտասովոր հմայքն ու բանաստեղծականությունը, միաժամանակ մերժում էին նրա հերոսին, որը, ըստ նրանց, արժանի չէր, որ իր մասին գրեին: Մերժելով իր ժամանակի պահպանողական գրականագետների տեսակետը, իր էությամբ գրող-նորարար Անդերսոնը գտնում էր, որ արվեստագետը պարտավոր է ծառայել ոչ թե մարդկանց, այլ «բառերին»: «Ես բառերի ծառան եմ,- գրում է նա,- դուք չէ, որ պիտի ինձ ասեք, թե որ բառերը պետք է ես դնեմ մի կողմ և չգրեմ: <...> Ես պետք է գրեմ համարձակ, ճշմարտացի ու հանդուգն» (Ա.1, 381-382):

Չենց այս կարևորագույն սկզբունքն է դրված «Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուի հիմքում, որում պատկերված են բացարձակապես դժբախտ, միայնակ, հասարակությունից մեկուսացած հերոսներ, որոնց գերակշիռ մեծամասնությունը տառապում է ֆիզիկական կամ մտավոր արատներով: Սակայն հեղինակը՝ ներկայացնելով նման հերոսների, գտնում է, որ առավել խելագար է այն աշխարհը, որում նրանք ապրում են և որի հետ բախման հետևանքով ձեռք են բերել իրենց արատները և մեկուսացել աշխարհից: Այս աշխարհի, իր ժամանակի Ամերիկայի մասին խոսելով, Անդերսոնը նշում էր. «Թվում էր թե այն ժամանակների Ամերիկայում կար միայն մեկ ուղի, մեկ հուն, որով այնպիսի երիտասարդները, որպիսին ես էի, կարող էին ուղղել իրենց էներգիան: Բոլորը պետք է միահամուռ իրենց նվիրեին նյութական ու արդյունաբերական առաջընթացին (Ա.1, 281-282):

Այս նմանությունը ամենևին էլ պատահական չէ. ֆիցջերալդը հիացած էր Անդերսոնի արվեստով և, հատկապես, «Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուով, որի մասին իր ընկերոջը, Մաքսուել Փերքինսին ուղղված նամակում, մասնավորապես գրում է. «Աստված իմ, ինչպես է նա կարողանում գրել: <...> Որքան պարզ է ամեն ինչ: Ինձ ծիծաղեցնում են քննադատների դատողությունները. չէ՞ որ Անդերսոնի ոճը հասարակ է՝ մոտավորապես այնպես, ինչպես մեքենայական բաժանմունքը, որտեղ դրված է դիմամոն»¹: Ֆիցջերալդի նշած պարզությունը շատ խաբուսիկ է: Անդերսոնի ժամանակակիցներից ոմանք, մասնավորապես

¹ Dear Scott/Dear Max, The Fitzgerald-Perkins Correspondence, Ed. by J.Kuehl and J.R.Bryer, London, 1970, p.48

արծակագիր Ռիչարդ Ռայթը, այն անվանում է «բարդ պարզություն»², ի նկատի ունենալով այն, որ թվացյալ պարզության տակ թաքնված է Անդերսոն-գրողի աշխարհի ու մարդկանց խոր ճանաչումը: «Տողերի արանքում» ներկայացնելով հերոսի ու աշխարհի բախումը անցյալում և նրա ներկայիս անմխիթար, մեկուսի վիճակը, նրա արատավորությունը, հեղինակը ընթերցողին «ստիպում է» պատկերացնել, զգալ հերոսի անցած տառապանքներով, վշտերով ու հիասթափություններով լի ուղին, ուղի, որն առողջ և կենսուրախ անծին դարձրել է մտավոր կամ հոգեկան հաշմանդամ: Այդպիսիք են, օրինակ «Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուի «Ձեռքեր» պատմվածքի հերոս Բիդլբաումը, «Թղթե գնդիկների» հերոս բժիշկ Ռիֆին, «Գաղափարներով մարդը» պատմվածքի հերոս Ուելինգը, «Հարգարժան մարդկանց» հերոս Վիլամսը, «Միայնակության» հերոս Ռոբինսոնը, «Աստծո ուժի» հերոս Հարթմանը և այլոք:

Ի տարբերություն Ֆոլքների, որի լավագույն ստեղծագործությունները լի են մարդկության ապագայի հանդեպ մեծ հավատով, «Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուն իր վրա կրում է հեղինակի հոռետեսության խոր կնիքը. «Ժողովրդավարությունը անդառնալի կիալչի,- գրում է Անդերսոնը իր հուշերում, կանխագուշակելով Ամերիկայի ու աշխարհի ապագան,- մինչև որ կվերածվի ոչնչի, դատարկ հնչյունի: Ամենուր, աշխարհի վրա կհաստատվի նյութական ու չարչիական հաջողությունների դարաշրջանը» (Ա.1, 213):

Հնայած քննադատներից ոմանք՝ հենվելով Անդերսոնի խոսքերի վրա, նշում են, որ արվեստագետի հոռետեսությունը «բնածին է», և ինքը, գրողը խոստովանում է, որ 20-ականներից սկսած իր մոտ տեղի են ունենում դեպրեսիայի բռնկումներ, հեղինակի հոռետեսությունն էապես պայմանավորված է ատելի իրականությամբ: Նշելով, որ ինքը առավելապես ապրում է իր անուրջների աշխարհում, որն իր համար հաճախ ավելի իրական է, քան իրական աշխարհը, Անդերսոնը իր վառ երևակայության մեջ միավորում է մարդկության անցյալն ու ներկան:

«Ուայնսբուրգ, Օհայո» ժողովածուն, որը քննադատներն անվանում են ոչ այլ կերպ, քան «վեպ-պատմվածքներով», քանի որ չնայած դրանում ընդգրկված պատմվածքներն ունեն իրենց ուրույն սյուժեն ու հերոսները, հեղինակը դրանք միավորում է բոլոր պատմվածքներում հիշատակվող, երիտասարդ լրագրող Ջորջ Ուիլարդի կերպարով: Ուիլարդը Ուայնսբուրգի բնակիչներից միակն է, որին մարդիկ վստահում են իրենց գաղտնիքները, պատմում իրենց վշտերի և ուրախությունների մասին: Իր և իր հերոսների միջև որոշակի

² Richard Wright Reader, Ed. by E.W.Wright and M.Fabre/Blueprint For negro writing, New-York, 1978, p.98-99

տարածությունն ստեղծելու նպատակով, Անդերսոնը ժողովածուի մեջ ներմուծել է ծեր գրողի կերպարը, որին Ուիլարդը փոխանցում է իր տեսածն ու լսածը: Դրանցից էլ ձևավորվում են «Ուայնսբուրգ, Օհայո»-ում տեղ գտած պատմվածքները, իսկ այն գործերում, որտեղ երիտասարդ լրագրողը հանդես է գալիս արդեն որպես գործող անձ, ինչպես ասենք «Մայրը», «Արթնացում», «Մահը», «Արհամարհանք» և «Մեկնում» պատմվածքներում, պատմողի դերն իր վրա է վերցնում ծեր պատմողը: Այս երկու կերպարներն էլ մասամբ ինքնակենսագրական են. կարծես միաձուլվելով տարբեր ժամանակները, Անդերսոնը ներկայացնում է իր անցյալն ու ներկան: Սակայն Անդերսոնին չէ-կարելի նույնացնել ոչ ծեր պատմողի և ոչ էլ երիտասարդ լրագրող Ուիլարդի հետ: Ժողովածուի պատմվածքները հանրագումարի բերելով կարելի է տեսնել մի կղզիացած աշխարհ, որն ամբողջապես բնակեցված է դժբախտ խելագարներով: Այս փաստը իր հերթին հիմնավորում է հերոսի փախուստը հայրենի քաղաքից, որը ներկայացվում է «Մեկնում» պատմվածքում: Ջորջ Ուիլարդը այստեղ անելիք չունի: Մնալով Ուայնսբուրգում նա կդառնա նույնչափ արատավոր ու դժբախտ, որչափ իր հայրենակիցներն են: Բայց, եթե հաշվի առնենք, որ պատմվածքների զգալի մասի հերոսները խելագարվել կամ այլ արատներ են ձեռք բերել Ուայնսբուրգից դուրս՝ «արտաքին» աշխարհից ստացած հարվածներից, հասկանալի կդառնա, որ հերոսի փախուստը՝ փախուստ է աշխարհից:

Ըստ էության Ուայնսբուրգը գտնվում է ժամանակից դուրս հարթության մեջ, դրանում կյանքը կանգ է առել, քաղաքին իշխող կարծրացած բարքերը, քաղքենիների երեսպաշտությունը, նյութական թշվառ գոյությունը, անհմարին են դարձնում մարդկային երջանկությունը, կաշկանդում են անհատի միտքը, գործողությունները, և Ջորջ Ուիլարդը այստեղ իրեն զգում է այնպես, ինչպես Անդերսոնը Ամերիկայում, երբ գրում է. «... Ես բանտում եմ, հսկայական զանգակի տակ» (Ա.1, 220): Պատանի հերոսը թե ընտանիքում, հորից և թե քաղաքում լսում է իրեն ուղղված այն նույն խորհուրդները, ինչ ժամանակին լսում էր Քամդենում ապրող ապագա գրողը՝ քաղաքի «իմաստուն» ծերունիներից. «Մոտ է այն ժամանակը, երբ փողը կդառնա ամեն ինչ: Փող կուտակիր, փողբիկ: Դու չի ես էներգիայով: Այժմ կարևորը՝ հարստանալն է, կյանքից հետ չընկնելը» (Ա.1, 176-177):

«Արկածը» պատմվածքի հերոսուհին դեմ չէր, որպեսզի սիրած տղան, Նեդը գնա Զիկագո և «մարդ դառնա»: Սակայն տարիներն անցնում էին, Նեդը չէր վերադառնում և աղջիկը՝ Ալիսան, որոշեց փող կուտակել ու գնալ նրա ետևից: Նա այդպես էլ Զիկագո չմեկնեց, իսկ փող կուտակելը տարիների ընթացքում նրա մոտ դարձավ մոլուցք, անբուժելի հիվանդություն, որից ժամանակից շուտ ծերացած, հուսալքված Ալիսան այլևս անկարող է ազատվել:

Մեկ այլ՝ «Միայնակություն», պատմվածքի հերոս արվեստագետ Ենոխ Ռոբինսոնը երկար տարիների ընթացքում բազմաթիվ հոգեկան ծանր ցնցումներ տանելուց հետո մեկուսացել է աշխարհից, փակվել Զիկագոյի իր սենյակում, տրվել է իր անուրջներին ու իրեն լիովին երջանիկ է զգում: Այս իրավիճակից նրան հանում է երաժիշտ գեղեցկուհու հանդեպ սերը: Նա փախչում է Զիկագոյից և՝ վերադառնալով Ուայնսթորգ, մեկուսանում իր հայրական տանը, քանի որ արծազանքելով գեղեցկուհու սիրում նա ստիպված կլիներ վերադառնալ իրեն այդքան ատելի դարձած վտանգներով, ատելությամբ, ստորությամբ ու նենգությամբ լի իրական աշխարհը (Ա.4, 121-130):

Թեև «Ուայնսթորգ, Օհայո» ժողովածուի մեջ հիմնականում առաջին պլան է մղված Զորջ Ուիլարդի կերպարը, մի շարք պատմվածքներում առավել մեծ դերակատարություն ունի նրա մոր՝ Էլիզաբեթ Ուիլարդի կերպարը, որի համար որպես նախատիպ է հանդիսացել արվեստագետի մյարը՝ Էմմա Սմիթ Անդերսոնը:

Ժողովածուի վերջին պատմվածքներից մեկը՝ «Մահը», ունի ասես ամփոփիչ խորհրդանշական ֆունկցիա:

Երբ մորը կորցրած Էլիզաբեթը երիտասարդ էր, նրա հայրը՝ «Ուիլարդի նոր տունը» հյուրանոցի մախկին տերը, որոշակի գումար կուտակելով, նպատակադրվեց փախչել Ուայնսթորգից: Սակայն նրա երազանքը չիրականացավ և մահվանից առաջ նա այդ գումարը տվեց դստերը, որպեսզի գոնե նա փախչի ու փրկվի այս անիծյալ քաղաքից: Շուրջ 20 տարի այս գումարը անուսնուց գաղտնի պահելով, մահվանից առաջ Էլիզաբեթ Ուիլարդը ուզում էր այն տալ միակ և շատ սիրած որդուն, որպեսզի նա փախչի ու այդ գումարի օգնությամբ «մեծ քաղաքում» գտնի իր երջանկությունը, սակայն չհասցրեց, և փողը մնաց իր սենյակի պատի մեջ թաղված:

Այս, պարզունակ թվացող պատմության մեջ Անդերսոնը ներդրել է մեծ խորհուրդ. թաղվել են «ամերիկյան երազանքները», որոնք ամերիկացիները փոխանցում էին սերնդե սերունդ: Դրանք վերջնականապես թաղվեցին «Ուիլարդի նոր տունը» հյուրանոցում. Անդերսոնի այլաբանության մեջ՝ նոր Ամերիկայում, քանի որ ամերիկացիները սերնդե սերունդ ձգտում էին երջանկություն ձեռք բերել ոչ թե սիրո, այլ փողի օգնությամբ:

Այսպիսով Անդերսոնը հանդիսացավ ոչ միայն պատմվածքի ժանրի հիմնադիրներից մեկը նոր ամերիկյան գրականության մեջ, այլև «ամերիկյան երազ»-ի թեմայի առաջին արծարծողներից, որը հետագայում լայն տարածում գտավ XX դարի առաջին կեսի ողջ ամերիկյան արձակում: